ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար տպագրական ծառայություններ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԾՁԲ-24/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 04 հուլիսի 2024թ.

Սույն թվականի հուլիսի 04-ին ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար տպագրական ծառայություններ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԾՁԲ-24/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ն. Կուտուզյանը, հանձնաժողովի անդամներ՝ Ս. Պ. Կարապետյանը և Մ. Հ. Նախրատյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի նախագծի հաստատումն, ինչպես նաև որակավորման ու պայամանագրի ապահովումները ներկայացնելու մասին:

Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրի նախագծի հաստատումը, ինչպես նաև որակավորման ու պայամանագրի ապահովումները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

1-ին չափաբաժնով ընտրված մասնակից «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի և «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հուլիսի 4-ին կնքել տպագրական ծառայությունների ձեռքբերման «ԳՊՀ-ԷԱՃ-ԾՁԲ-24/14-1» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 213.240-00 (երկու հարյուր տասներեք հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

Հանձանաժողովի նախագահ՝ Ն. Ա. Կուտուզյան

Հանձանաժողովի անդամ՝ Ս. Պ. Կարապետյան

Հանձանաժողովի անդամ՝ Մ. Հ. Նախրատյան

Հանձանաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան